Ազդարարության Trumpet's Sound փող

56-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԿ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2025

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նա ողջ է . . . . . Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Նա սովորեցրեց նրանց (2) . . . . . Նեյլ Բուքման

Ի՞նչ նշանակություն ունի հարությունն
ինձ համար (1) . . . . . Դոն Սթորմր

Պահանջվում են շուրջօրյա գործող
քրիստոնյաներ . . . . . Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Մանկանց ավետարանչության ընկերակցություն . . ՄԱԸ

Մանկապատանեկան ծառայության
կարևորությունը . . . . . ԱՍՄ

Նա ողջ է

«Հիսուսը նրան ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը. ով հավատում է Ինձ, թեև մեռնի, պիտի՛ ապրի: Եվ ով ապրում է և հավատում է Ինձ, երբեք պիտի չմեռնի: Դու հավատո՞ւմ ես սրան» (Հովհ. 11:25-26):

Արդյոք կա՞ կյանք մահից հետո: Այո՛:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը խաչի վրա մահանալուց և թաղվելուց հետո հարություն առավ: Հին եգիպտացիները հավատում էին մահից հետո կյանքին: Նրանք զմռսում էին իրենց մեռելների մարմինները ու թաղում ոսկու և սննդի հետ՝ հույս ունենալով, որ մի օր կյանքի կվերադառնան: Արդեն 5000 տարի է անցել, բայց նրանցից ոչ ոք կյանքի չի վերադարձել: Միայն Քրիստոսն է իրական Հարությունը և Կյանքը: Այս խոստումը բոլոր հավատացյալների համար է:

«Բայց մեր քաղաքականությունը երկնքում է, որտեղից սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, որ պիտի նորոգի մեր խոնարհ մարմինը, որպեսզի այն կերպարանակից լինի Իր փառավոր մարմնին, այն զորությամբ, որ կարող է ամեն բան հնազանդեցնել Իրեն» (Փիլիպ. 3:20-21):

Մեր բոլոր ֆիզիկական տկարությունները վերանալու են: Բոլոր նրանք, ովքեր տառապել են քաղցկեղից, հիշողության խանգարումներից կամ հոդաբորբից, այլևս չեն ունենա այդ ցավերը: Մենք կլինենք Տիրոջ ներկայության մեջ՝ լի սիրով ու փառքով: Այլևս չի լինի մեղք, պատերազմ, նախանձ կամ ցավ: Կլինի հավիտենական խաղաղություն Աստծո հետ:

«Եվ ինչպես հողեղենի պատկերն ենք կրում, այդպես էլ երկնավորի պատկերը պիտի կրենք: Ուրեմն պետք է ասեմ ձեզ, եղբայրնե՛ր, որ մարմինն ու արյունը չեն կարող Աստծո թագավորությունը ժառանգել, ո՛չ էլ ապականությունը անապականություն կժառանգի: Ահա, մի խորհուրդ հայտնեմ ձեզ. բոլորս պիտի չենջենք, բայց բոլո՛րս պիտի փոխվենք, հանկարծակի, մեկ ակնթարթում՝ վերջին փողի ժամանակ, որովհետև փողը կհնչի, մեռելները հարություն կառնեն առանց ապականության, և մենք կփոխվենք» (Ա Կորնթ. 15:49-52):

Բոլոր նրանք, ովքեր վերստին են ծնվել ու Տիրոջն ընդունել են իրենց սրտում, Աստված նրանց խոստանում է ոչ միայն նոր սկիզբ այս աշխարհում Հիսուս Քրիստոսի հետ, այլև հավիտենական կյանք՝ Երկընքում:

«Թող ձեր սրտերը չխռովվեն. Աստծո՛ւն հավատացեք, նույնպես Ինձ հավատացեք: Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան. եթե այդպես չլիներ, Ես ձեզ կասեի: Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որպեսզի որտեղ Ես եմ, դուք էլ այնտեղ լինեք» (Հովհ. 14:1-3):

Սա այն խոստումն է, որը վստահեցնում է մեզ, որ մեր հավիտենական ապագան լինելու է Նրա հետ, ով մեզ սիրեց ու Իր կյանքը մեզ համար տվեց խաչի վրա:

Այո՛, Նա նորից գալու է: Դուք պատրա՞ստ եք: Դուք սրտով ու հոգով պատրա՞ստ եք Նրան հանդիպելու:

«Եվ երբ այս ապականացուն անապականություն հագնի և այս մահկանացուն՝ անմահություն, այն ժամանակ կկատարվի այն Խոսքը, որ գրված է. «Մահը կուլ գնաց հաղթության»:

«Ո՛վ մահ, ու՞ր է քո խայթոցը, ո՛վ գերեզման, ու՞ր է քո հաղթանակը»:

Մահվան խայթոցը մեղքն է, իսկ մեղքի զորությունը՝ օրենքը: Բայց գոհությո՛ւն Աստծուն, որ մեզ հաղթություն տվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Ա Կորնթ. 15:54-57):

Ամեն: Թո՛ղ հարության հույսը լցնի ձեր սիրտն ուրախությամբ:

Հ. Գ.

«Ամեն ինչ արեք առանց տրտունջների և վիճաբանությունների, որ լինեք անարատ և անվնաս, Աստծո որդիներ, անմեղադրելի՝ այս ծուռ ու խոտորյալ սերնդի մեջ, որոնց մեջ լուսատուների պես փայլեցեք աշխարհում»:

Փիլիպ. 2:14-15

Նա սովորեցրեց նրանց (2)

Մատթեոս 5-րդ գլուխ

Մաս 2. Հիսուսի աշակերտները

«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը»:

Լեռան քարոզում Հիսուսը մարդկանց չէր սովորեցնում փրկության և մեղքի պատժից ազատվելու մասին, այլ թե ինչպիսին պետք է լինի Նրան հետևելու փափագ ունեցող աշակերտի կյանքը: Միայն մի քանի տարի անց աշակերտներն ամբողջությամբ կհասկանային, թե Հիսուսն ինչպես պիտի փրկեր նրանց մեղքերից Իր մահվամբ ու հարությամբ: Այդ ժամանակ նրանք կհռչակեն Նրա մահվան ու հարության զորությունը, և թե ինչպես անաստվածը հավատքի միջոցով կարող է Աստծո առաջ արդարանալ: Հիմա նրանք սովորում են, թե որն է ճըշմարիտ արդարությունը:

Հոգով աղքատների, ողբացողների, հեզերի և արդարության ծարավ ունեցողների երանելիությունը Նրա աշակերտները լինելու մեջ է: Նրանք գիտակցում են իրենց հոգևոր աղքատությունը, չեն խաբվում աշխարհի գրավիչ և ունայն առաջարկներից ու ցանկություններից: Նրանք գուցե չգիտեն, թե ինչպես փոխել իրենց վիճակը, բայց նրանց հայացքը ուղղված է Հիսուսի վրա:

«Երանի՛ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գրտնեն»:

Նա, ով հասկացել է իր մեղավորությունը, պատրաստ է ուրիշներին ողորմելու ու ներելու: Վրեժխնդրության կամ սեփական իրավունքները պահանջելու փոխարեն նա նախընտրում է ողորմություն ցուցաբերելը: Նա տկար կամ վախկոտ չէ, այլ այնպիսին, ով վստահում է Աստծո արդարությանն ու հավատարմությանը:

«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք պիտի տեսնեն Աստծուն»:

Արդյոք հնարավո՞ր է Հիսուսի աշակերտը կեղծ նպատակով կամ

թաքնված օրակարգով հետևի Նրան: Այդպիսի շարժառիթներն արագորեն բացահայտվում են: Բայց նա, ով անկեղծ սրտով ձգտում է սրբության՝ չնայած իր թուլություններին, մեծապես կպարգևատրվի:

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն»:

Աշակերտի սրտի անկեղծ փափագը հետևյալն է. «Թո՛ղ որ լինեմ Աստծո ճշմարիտ որդի»: Այդպիսի մարդիկ խաղաղություն են բերում և ոչ թե բախումներ: Ինչը ներսում է, արտացոլվում է նաև վերաբերմունքում:

«Երանի՛ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը»:

Տեր Հիսուսը դեռ չէր հանդիպել իշխանությունների բացահայտ ընդդիմությանը, և հավանաբար Նրա շուրջը գտնվող տղամարդկանց ու կանանց համար զարմանալի կլիներ, եթե իշխանությունները մերժեին բարի գործեր անող և լավ ուսմունք տարածող Մարդուն: Նա Իր աշակերտներին պատրաստում էր գալիք հալածանքների համար: Նա նրանց կրկին ու կրկին հիշեցնում էր գալիք հալածանքների մասին և վստահեցնում դրա պարգևատրման համար. *«Երանի՛ ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և Իմ պատճառով ձեր մասին ստելով ամեն տեսակ չար բան ասեն: Ցնծացե՛ք և ուրախ եղե՛ք, որ ձեր վարձատրությունը մեծ է երկնքի մեջ, քանի որ այսպես հալածեցին ձեզանից առաջ եղած մարգարեներին»:*

Ուրեմն ովքե՞ր են այս աշակերտները: Նրանք հոգով աղքատ, ողբացող, հեզ, արդարության ծարավ, ողորմած, սրտով մաքուր և խաղաղասեր մարդիկ են: Աշխարհի համար նրանք կարող են աննշան թվալ, բայց Աստծո համար նրանք Նրա որդիներն են:

«Դուք եք երկրի աղը...»:

Ի՞նչ, բայց մենք աննշան մարդիկ ենք: Ինչո՞վ կարող ենք պարծենալ:

«Դուք եք աշխարհի լույսը...»:

Տեր Հիսուսն Իր աշակերտներին նայեց ու տեսավ այն փոխակերպումը, որը Սուրբ Հոգին ի փառս Աստծո պիտի իրականացներ հա-

սարակ տղամարդկանց ու կանանց կյանքում: Նրանք պիտի լինեին, ինչպես քաղաքը բլրի վրա՝ բոլորին տեսանելի: Նրանց լույսը չպիտի ծածկվեր:

Հնարավոր է՝ մենք ավելի զուսպ և ինքնամփոփ կյանք ենք վարում: Մեզ համար գուցե անհարմար է հիշել, թե ինչպես է Տերը սովորեցրել, որ մեր՝ միմյանց հանդեպ սերն աշխարհին ցույց կտա, որ Նրա աշակերտներն ենք (Հովհ. 13:34-35): Արդյո՞ք աղը կորցրել է իր համը: Արդյո՞ք մեր լույսը թաքնված է զամբյուղի տակ: Այստեղ մարտահրավեր ունենք՝ ապրել այնպես, որ մեր լույսը երևա, և մենք չպետք է անտեսենք այն:

«Թո՛ղ ձեր լույսն այսպես փայլի մարդկանց առջև, որ տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է»:

Նեյլ Բուքման

Ի՞նչ նշանակություն ունի հարությունն ինձ համար (1)

Հովհ. 12:1-8, Ղուկ. 24:13-34

Ամենք ամեն տարի նշում ենք Հարության տոնը, բայց երբևէ մտածե՞լ ենք՝ ինչ է այն նշանակում մեր կյանքի համար: Արդյոք այն փոխե՞լ է մեզ:

Ընտանիքը Բեթանիայում

Եկե՛ք անդրադառնանք Բեթանիայում ապրող մի ընտանիքի՝ Ղազարոսին ու նրա քույրերին՝ Մարթային ու Մարիամին, որոնց կյանքը փոխվեց Հիսուսի հարության հրաշքով: Ղազարոսը մահացել էր, և նրա քույրերը, հատկապես Մարիամը, սրտով կոտրված էին: Բայց Տերը Իր ժամանակին և Իր նպատակներին համապատասխան հարություն տվեց Ղազարոսին մեռելներից: Ինչպե՞ս Ղազարոսի հարությունը փոխեց Բեթանիայում ապրող ընտանիքին:

Հովհ. 12:1-8-ը կարդալիս մեր ուշադրությունն է գրավում մի քանի գործողություն: Ղազարոսը նստած հաղորդակցվում էր Տիրոջ հետ, Մարթան ծառայում էր, իսկ Մարիամը՝ երկրպագում:

Մենք հավանաբար շատ լավ գիտենք պատմությունը: Ղազարոսը հիվանդ էր, և Տերը հետաձգեց Իր ժամանումը Բեթանիա: Երբ Հիսուսը հասավ գյուղ, Ղազարոսը չորս օր էր, ինչ մահացած էր: Նրա քույրերը հուսահատված էին և անմխիթար: Նրանք վստահ էին, որ եթե Տերն ավելի վաղ հասներ, իրենց եղբայրը չէր մահանա: Նրանք որևէ հույս չունեին: Եվ այդ ժամանակ Տերն արեց այն, ինչ նրանք չէին սպասում. Նա հարություն տվեց մեռած մարդուն: Ի՞նչ էր նշանակում հարությունը նրանցից յուրաքանչյուրի համար: Դիտարկենք Հովհ. 12:1-8-ի ուղերձը, որը պատմում է Հիսուսի համար կազմակերպված խնջույքի մասին, որին երեքն էլ մասնակցում էին:

Ղազարոսի մոտ կար ակնհայտ փոփոխություն՝ համեմատած նրա փորձառածի հետ: Նա մահացած էր: Բայց մահացածը ողջ էր, և խընջույքի ժամանակ նստած էր Տիրոջ կողքին: Մահացածը ողջ էր, բայց նա ավելի քան ողջ էր: Նա Տեր Հիսուսի հետ հաղորդակցությունից էր վայելում: Ահա առաջին տարբերությունը, որը հարությունը պետք է բերի յուրաքանչյուրին: Մենք, որ մեռած էինք հանցանքների և մեղքերի մեջ, կենդանանում ենք Քրիստոսով՝ Նրա անվանը հավատալով: Այդ դեպքում մենք վայելում ենք Նրա հետ հաղորդակցությունը: Արդյոք վերստին ծնվե՞լ ենք: Այստեղից պետք է սկսենք:

Ի՞նչ փոփոխություն ենք տեսնում Մարթայի մոտ: Նրան առաջին անգամ հանդիպում ենք Ղուկ. 10:38-42-ում: Նա իր տանն ընդունել էր Տիրոջը և Նրա աշակերտներին, և պետք է ճաշ պատրաստեր հյուրերի համար: Նա իր քրոջից ոչ մի օգնություն չէր ստանում: Մարիամը նստած էր Տեր Հիսուսի ոտքերի մոտ և ուշադիր լսում էր Տիրոջ ասած յուրաքանչյուր խոսքը: Այսպիսով, Մարթան գնաց Հիսուսի մոտ՝ բողոքելով, որ Մարիամը չի կատարում իր բաժին աշխատանքը: Նա խնդրեց Տիրոջը հրահանգներ տալ Մարիամին՝ օգնելու ճաշի պատրաստմանը: Տերը նման բան չարեց, այլ ասաց, որ Մարիամն ընտրել է բարի բաժինը, և այն նրանից չի վերցվի:

Ի՞նչ ենք տեսնում Ղազարոսի՝ մեռելներից հարություն առնելուց հետո: Ի՞նչ փոփոխություն առաջացրեց հարությունը Մարթայի համար:

Մենք նրան տեսնում ենք (2-րդ հմր.) ծառայելիս: Ամենայն հավանականությամբ, նա իր տանը չէր: Խնջույքը կազմակերպվել էր բորոտ Սիմոնի տանը: Բայց Մարթան ծառայում էր՝ առանց որևէ բողոքի: Հարությունն այս տարբերությունն առաջացրեց. նա ծառայում էր առանց բողոքի: Մեզ համար հարցն այն է, թե արդյոք ծառայո՞ւմ ենք Տեր Հիսուսին և մեր մերձավորներին առանց բողոքի, թե՞ այնպիսի մարդիկ ենք, ովքեր բողոքում են, որ եկեղեցում ոչ ոք չի օգնում մեզ, որ ստիպված ենք ամեն ինչ ինքնուրույն անել: Ղազարոսի հարությունը փոխեց Մարթային: Հարությունը նույնպես կարող է փոխել և մեզ:

Ընտանիքի երրորդ անդամը Մարիամն էր: Նրան տեսնում ենք Տեր Հիսուսի ոտքերի մոտ նստած: Ղուկ. 10-րդ գլխում նա Նրա ոտքերի մոտ էր լսում ու սովորում. նա աշակերտ էր: Նա ընտրել էր «լավ բաժինը» կոչվող մի բան, և այն չէին խլի նրանից: Հովհ. 11-րդ գլխում նա կրկին երևում է Տիրոջ ոտքերի մոտ՝ լաց լինելով. նա կորցրել էր իր եղբորը և վշտացած էր: Հովհ. 12-րդ գլխում նա կրկին Տիրոջ ոտքերի մոտ էր: Այս անգամ նա երկրպագում էր: Ղազարոսի հարությունը նրան վշտացած աշակերտից վերածել էր երկրպագուի:

Եվ այնուամենայնիվ, Մարիամին քննադատեցին: Հուդան և մյուս աշակերտներից մի քանիսն այս նվիրվածությունն անվանեցին վատնում: Տերը պաշտպանեց նրան: Այն, ինչ նա արել էր, արվել էր Նրա թաղման օրվա համար: Ի՞նչ է սա նշանակում: Պարզվում է, որ Մարիամը միակ մարդն էր, ով գիտակցում էր, որ Հիսուսը ոչ միայն մահանալու է, այլև հարություն է առնելու: Մյուսները նույնիսկ չհավատացին Տիրոջը, երբ Նա ասաց, որ մահանալու է:

Մարիամը գիտակցում էր, որ Տերը շուտով կմահանա և հարություն կառնի: Նա հասկանում էր, որ եթե Նրա մարմինն ուզում էր օծել թաղման համար, ապա պետք է դա այդ ժամանակ աներ: Նրա մահից հետո այդ հնարավորությունը չէր լինի: Նշենք, որ Մարիամը հարության օրը առավոտյան խաչի մոտ չէր: Այլ կանայք գնացել էին գերեզման՝ Տիրոջ մարմինը օծելու, բայց Մարիամը դրա կարիքը չուներ: Նա արդեն ցույց էր տվել իր նվիրվածությունը Նրան:

Ի՞նչ փոփոխություն բերեց հարությունը Մարիամի կյանքում: Այն նրան վերածեց երկրպագուի: Նա արդեն աշակերտ էր, մխիթարված

աշակերտ, բայց դարձավ երկրպագու:

Մտածե՛ք այն փոփոխության մասին, որը մահացած մարդու հարությունը բերեց Բեթանիայի ընտանիքի համար: Մեռած մարդը կենդանի էր և վայելում էր կյանքի ու փառքի Տիրոջ հետ հաղորդակցությունը: Բողոքող կինը սովորել էր ծառայել իր Տիրոջն առանց բողոքի: Իսկ վշտացած աշակերտը դարձել էր երկրպագու:

Էմմաուսի ճանապարհին

Ղուկասը մեզ պատմում է երկու տղամարդկանց մասին (կամ տղամարդու և նրա կնոջ մասին), որոնք Երուսաղեմից քայլում էին դեպի Էմմաուս: Մենք գիտենք, որ նրանք շատ տխուր էին: Երբ նրանք քայլում էին, Հիսուսն Ինքը հանկարծ հայտնվեց և սկսեց քայլել նրանց հետ: Բայց նրանք չճանաչեցին Նրան:

Նա հարցրեց նրանց տխրության պատճառը, և նրանք ասացին, որ Նա, ում նրանք համարում էին Մեսիա, խաչվել է երեք օր առաջ: Նրանց սպասումները, որ Նա կփրկագնի Իսրայելին, չարդարացան: Նրանք խորապես հիասթափված աշակերտներ էին: Նրանք նաև շատ շփոթված էին կանանց բերած լուրից. գերեզմանը դատարկ է: Այդ ժամանակ Տեր Հիսուսը Հին Կտակարանի գրություններից բացատրեց Իրեն վերաբերող բոլոր բաները:

Էմմաուս հասնելուն պես նրանք խնդրեցին Նրան մնալ իրենց հետ: Երբ նրանք նստեցին ուտելու, Նա վերցրեց հացը, օրհնեց այն, կտրեց և տվեց նրանց: Այդ ժամանակ այս երկու մարդիկ ճանաչեցին անծանոթին: Մահացածը ողջ էր:

Ի՞նչ փոփոխություն բերեց հարությունը նրանց կյանքում: Նրանց քայլերում ոչ մի հոգնածություն չկար, երբ նրանք 12 կիլոմետր քայլելով վերադարձան Երուսաղեմ՝ մյուսներին պատմելու, որ տեսել են Տիրոջը: Հարությունն արթնացրել էր նրանց ուրախությունը և այդ ուրախությունը ուրիշների հետ կիսելու ցանկությունը: Արդյո՞ք սա է մեր արձագանքը հարության ճշմարտությանը:

Ի՞նչ նշանակություն ունի հարությունն ինձ համար: Արդյո՞ք այն որևէ կերպ փոխել է ինձ: Արդյո՞ք ես դառնում եմ այն մարդը, որը Աստված ուզում է, որ լինեմ:

Դոն Սթորմը

Պահանջվում են շուրջօրյա գործող քրիստոնյաներ

Հեսու 24:14-27

Աշխատող մարդիկ անմիջապես հասկանում են շուրջօրյա, լրիվ դրույքով, կես դրույքով, ժամանակավոր և մշտական աշխատանք հասկացությունները: Դրանք ցույց են տալիս աշխատանքի տևողությունն ու հաճախականությունը:

Հիսուսը կարող էր այս նույն բառերով բնութագրել իր հետևորդներին: Նրա աշակերտներն ու Իրեն հետևող կանանց խումբը շուրջօրյա հետևորդներ էին (Ղուկ. 9:1): Կային նաև 72 «կես դրույքով» հետեվորդներ (Ղուկ. 10:1): Կարելի է ասել, որ Հիսուսն ուներ նաև պատահական հետևորդներ. դրանք մարդկանց այն խմբերն էին, որոնք գալիս էին Նրա խոսքը լսելու (Ղուկ. 9:11): Հոգեգալստից (Պենտեկոստեից) հետո եկեղեցին արագ աճեց, ու թեև այնտեղ կային «կես դրույքով» գործողներ և պատահական անդամներ, այնուամենայնիվ շատերը Քրիստոսի շուրջօրյա գործող հետևորդներն էին, և նրանց թիվն օրեցօր ավելանում էր (Գործք 2:41):

Շուրջօրյա գործող քրիստոնյաներ

«Ուրեմն, սիրելի՛ եղբայրներ, հաստա՛ռ եղեք, անշա՛րժ կացեք, ամեն ժամանակ ավելի՛ առաջացեք Տիրոջ գործում, գիտցե՛ք, որ ձեր աշխատանքը զուր չէ Տիրոջում» (Ա Կորնթ. 15:58):

«Կես դրույքով» քրիստոնյաներ

«Չեք կարող Տիրոջ բաժակից խմել և դևերի բաժակից, չեք կարող Տիրոջ սեղանից վայելել և դևերի սեղանից» (Ա Կորնթ. 10:21):

Պատահական քրիստոնյաներ

«Որովհետև շատերին բժշկեց, մինչև որ նրա վրա էին թափվում, որ նրան դիպչեն, որոնք որ ցավ ունեին» (Մարկ. 3:10):

Ժամանակավոր քրիստոնյաներ

«Նրա համար ասացի ձեզ, թե ոչ ոք չի կարող մոտենալ, եթե իմ Հորից

տրված չէ նրան» (Հովհ. 6:66):

Աստված ինչպիսի՞ հավատացյալներ է ուզում: Արդյոք մենք գիտե՞նք, թե որ դասակարգին ենք պատկանում. *«Եվ հիմա, ով Իսրայել, ի՞նչ է պահանջում քեզանից քո Եհովա Աստվածը. այն, որ վախենաս քո Եհովա Աստծուց, նրա բոլոր ճանապարհներով գնաս և նրան սիրես և պաշտես քո Եհովա Աստծուն՝ քո ամբողջ սրտով և ամբողջ հոգով, որ Եհովայի պատվիրանները և կանոնները պահես, որոնք ես այսօր քեզ պատվիրում եմ, որ քեզ համար լավ լինի»* (Բ Օր. 10:12-13):

Աստված շուրջօրյա գործող, մշտական քրիստոնյաներ է ուզում: Մենք կարող ենք միայն ընտրել՝ Աստծո՞ւն ենք պատկանում, թե՞ չարին (Հեսու 24:14-15): Չեն կարող լինել «կես դրույքով» գործող, պատահական կամ ժամանակավոր քրիստոնյաներ: Այսպիսի մարդիկ իրենք իրենց են խաբում: Քրիստոսը հետևյալն է ասում այն մարդկանց, ովքեր առաջնահերթությունը տալիս են իրենց գործին ու խաղին. *«Ով որ ձեռքը մահճի վրա է դնում և հետ նայում, հարմար չէ Աստծո արքայության համար»* (Ղուկ. 9:62):

Նախքան որևէ «կես դրույքով» քրիստոնյայի մատնացույց անելը, պարզի՛ր, թե որ դասակարգման, որ խմբի մեջ ես դու: Կարո՞ղ ես անկեղծորեն քեզ համարել շուրջօրյա գործող, մշտական քրիստոնյա:

«Եվ ամենքին ասում էր՝ եթե մեկը կամենում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնի և իմ հետևից գա» (Ղուկ. 9:23-24):

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Մանկանց ավետարանչության ընկերացությունը միջեկեղեցական անկախ, վերստին ծնված հավատացյալներից կազմված մի կազմակերպություն է, որի նպատակն է Ճշմարտության Խոսքը սովորեց-

նել տղաներին ու աղջիկներին՝ հավատալով, որ Սուրբ Հոգին կարող է նրանց վերստին ծնել և աճեցնել Տիրոջ շնոհքի մեջ Խոսքի ներկայության միջավայրի մեջ: Վստահ ենք, որ Ավետարանը Աստծո զորության միակ աղբյուրն է՝ լուսավորելու խավար սրտերը և մտքերը:

Մեր աշխատանքներում օգտագործում ենք պարզ և ազդեցիկ մեթոդներ՝ սովորեցնելու Աստծո Խոսքը: Մենք պատգամը չենք փոխում, այլ Խոսքը սովորեցնում ենք երեխաներին մատչելի լեզվով:

Աստծո շնորհքով տարեկան մոտավորապես 20,000 երեխաների և պատանիների ենք հասնում տարբեր ծրագրերով՝ անհատական ավետարանչություն, բակային ճամբարներ, ճամբարներ, Բարի լուրի խմբակներ, համագումարներ, օնլայն ծառայություն:

Մեր խմբում այս պահին 12 հոգի են, բայց մեր ծառայությունները մենակ չենք անում: Մեր կողքին ունենք կամավորների մեծ բանակ, որոնք Տեր Հիսուսին սիրում են և ուզում են Նրան պատվեն՝ ծառայելով երեխաներին:

Մեր նպատակներից մեկն է նաև պատրաստել ուսուցիչների, որոնք լավ մարզված և պատրաստված կլինեն երեխաների հետ աշխատելու համար: Դասընթացների միջոցով նրանց պատրաստում և տրամադրում ենք ՄԱԸ-ի գրականությունը, որ օգտագործեն իրենք ծառայություններում:

Աստծո պատգամը չի փոխվել. այսօր էլ երեխաները կարիք ունեն Ավետարանի: Ճշմարտությունը քարոզող եկեղեցիների և քրիստոնեական կազմակերպությունների հետ աշխատում ենք՝ հասնելու եկեղեցի չհաճախող երեխաներին ու պատանիներին: Ուզում եմ ներկայացնել հիմնական ծառայություններից 2-ը:

1) Բարի լուրի խմբակներ

Մենք փորձում ենք Բարի լուրի խմբակներ կազմակերպել հարևանությամբ ապրող երեխաների համար, որ դրանք մոտ լինեն երեխաներին: Բարի լուրի խմբակներն անցկացվում են շաբաթը մեկ անգամ մեկ ժամ տևողությամբ: Խմբակն անցկացվում է տվյալ վայրում բնակվող հավատացյալներից մեկի կամ խմբակի երեխաներից մեկի տանը: Պատրաստված ուսուցիչները սովորեցնում են Աստծո Խոսքը՝ օգտա-

գործելով զունավոր տեսապատկերներ, անգիր են սովորեցնում աստվածաշնչյան համարներ, երգում են հոգևոր երգեր և ուսուցողական և խաղային այլ գործունեություններ: Երեխաներն ուրախությամբ են մասնակցում այս խմբակներին: Սա եկեղեցուց դուրս իրականացվող ծառայություն է և արդյունավետ միջոց է՝ հասնելու այն երեխաներին, ովքեր տարբեր պատճառներով չեն կարողանում հաճախել եկեղեցի:

2) Ճամբարներ

2011 թվականից մենք ճամբարներ ենք կազմակերպում: Փառք ենք տալիս Տիրոջը, որ 2020 թվականին ունեցանք ճամբարի սեփական վայր, որը մեծ նվեր էր երեխաների և պատանիների համար:

Ճամբարը լավագույն տեղն է, որտեղ ոչ հավատացյալ երեխաները հանդիպում են իրենց Փրկչի հետ: Այստեղ երեխաները և պատանիներն ապրում են քրիստոնեական միջավայրում, կտրվում են տարբեր զբաղմունքներից և իրենց մանկությունն են վայելում:

Ճամբար են գալիս նաև հավատացյալ երեխաներ, որոնք աճում են Քրիստոսի շնորհքի և գիտության մեջ: Ճամբարի մասնակիցները ընկերանում են, ճամբարից հետո սկսում են հաճախել եկեղեցիներ, որ շարունակեն ուսուցանվել տիրոջ Խոսքով և սովորեն քայլել Տեր Հիսուսի հետ:

Այս երկու ծառայություններից բացի՝ այլ ծառայություններ ևս ունենք: Եվ այս աշխատանքները չէինք կարող հաջողությամբ կատարել, եթե չունենայինք հավատարիմ աղոթակիցներ և մեզ նյութապես աջակիցներ, որոնց համար Աստծուն փառք ենք տալիս: Նրանց ծառայությունը կարծես վարագույրի ետևում է, բայց ներդնում են իրենց ժամանակը, դրամը՝ հավիտենականության և Աստծո թագավորության ընդարձակման համար:

Այս բոլորի մեջ մենք միասին Տիրոջ պատվերին ենք հնազանդվում՝ գնալով և Ավետարանը քարոզելով ամեն մի արարածի:

Հայաստանի ՄԱԸ

❊ ❊ ❊

Մանկապատանեկան ծառայության կարևորությունը

«Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և ավետարանը քարոզեցե՛ք բոլոր մարդկանց» (Մարկ. 16:15):

Եթե հարցնենք բժիշկներին, թե որն է ավելի հեշտ՝ կազմակերպել հիվանդությունների կանխարգելո՞ւմը, բուժո՞ւմը, թե՞ բարդությունների հետևանքները, միանշանակ բոլորի պատասխանը կլինի «կանխարգելումը»: Ինչո՞ւ, քանի որ հասկանալով հիվանդությունների ախտանշանները՝ հնարավոր է կանխարգելել և խուսափել բուն հիվանդությունից:

Իսկ եթե հարցնենք այն ավետարանիչներին, քարոզիչներին, միսիոներներին, ովքեր ավետարանելու գործում անում են իրենց լավագույնը, թե որն է ավելի հեշտ՝ փոխանցել Աստծո Խոսքը մանուկների՞ն, որոնք դեռ չեն գիտակցել և չեն ընկել մեղքի հիվանդության մեջ՝ կանխարգելել, չափահաս մարդկա՞նց, որոնցից շատերը, մերժելով Տիրոջ Խոսքը, ճաշակել են մեղքի համն ու հետևանքները՝ բուժումը, թե՞ այն մարդկանց, ովքեր մահացել են մեղքով՝ բարդությունները, միանշանակ բոլորի պատասխանը կլինի՝ մանուկներին: Ինչո՞ւ: Քանի որ նրանք բաց են Ավետարանի համար և մանկական պարզ հավատքով կընդունեն Տիրոջ առաջարկած նվերը՝ փրկությունը:

Ծնողավարությունն ինքնին բարդ աշխատանք է, և յուրաքանչյուր ծնող իր երեխայի լավն է ուզում, ունի իր մոտեցումներն ու դաստիարակման առաջնահերթությունները: Որոշները կարևորում են երեխային տալ սպորտի, որ առողջ լինի և կարողանա պաշտպանվել ու պաշտպանել հարազատներին: Տերն ասում է. «Ես եմ ապավենն ու ժայռը»: Որոշները տարատեսակ պարապմունքների են տալիս՝ կրթական մակարդակը բարելավելու և երեխաներին հենց այդ ուղով առաջնորդելու համար: Տերն ասում է. *«Ամեցե՛ք շնորհով և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի գիտությամբ»:* Բայց ծնողների, խնամակալների մեծ մասը չի էլ մտածում, որ երեխան, բացի ֆիզիկական, նյութական և մտային կարիքներից, ունի նաև հոգևոր կարիք, այն է՝ «Փնտրել Աստծուն և լցվել Աստծո Խոսքով»: Այո՛, լավ է մտածել երեխայի կյանքի բոլոր

ոլորտների մասին, բայց չպետք է բաց թողնել հոգևոր ոլորտը, քանի որ եթե բաց մնա դա, փոխարենը կլցվի աշխարհային ցանկություններով և ավելի ու ավելի հեռու կմնա Աստծուց:

Աստվածաշնչում բազում պատվերներ կան Ավետարանը տարածելու և մարդկանց օգնելու հոգևորապես աճելու վերաբերյալ: Եթե Աստծո Խոսքն Առակ. 22:6-ում ասում է. *«Կրթի՛ր մանուկին այն ճանապարհով, որ պետք է գնա, և ծերության ժամանակ չի խոտորի դրանից»,* ուրեմն պետք է և խիստ անհրաժեշտ է երեխաներին կրթել, սովորեցնել Աստծո Խոսքով, օգնել, առաջնորդել, որ հասկանան կարդացածը և նեցուկ լինել՝ օգնելով հնազանդվել Խոսքին: Տերը մեծ կարևորություն է տալիս մանուկների ավետարանչությանը: Եվ այս պատվերը մեզ տրվեց, որ գնանք և ավետարանը հասցնենք չփրկված, բայց շատերի կողմից անմեղ թվացող երեխաներին:

Երեխաներին մեղքի և Փրկիչ Տեր Հիսուսի մասին սովորեցնելը մեր՝ ծնողներիս, տատիկ-պապիկներիս, ուսուցիչներիս պարտականությունն ու պատասխանատվությունն է:

2016 թվականից ACM-ի անձնակազմով մեզ հասանելի վայրերում Ավետարանը հասցնում ենք տարբեր տարիքային խմբերի, ներառյալ 6-15 տարեկաններին: Տարվա մեջ տոնական տարբեր խմբակներ ենք կազմակերպում: Ունենք երկու շաբաթը մեկ, ամիսը մեկ անգամ և տոնական խմբակներ: Երբեմն մենք էլ ենք զարմանում Տիրոջ գործերի վրա, թե ինչպես է մեզ առաջնորդում վայրեր, որտեղ շատ խրթին կամ գրեթե անհնարին է ուրիշ կազմակերպությունների մուտքը: Սա էլ Տիրոջ շնորհքն է, որ կարողանում ենք այդպիսի վայրեր Ավետարանը հասցնել թե՛ փոքրերին և թե՛ իրենց ծնողներին, ուսուցիչներին:

Եկե՛ք Խոսքը կատարողներ լինենք և ոչ միայն լսողներ: Թո՛ղ Տերն օրնի, իմաստությամբ առաջնորդի, որ Իր Խոսքի մեջ մնանք:

Աղոթո՛ղ եղեք մեր անձնակազմի, ծառայությունների համար, որ Տերն առողջ պահի մեզ, օրհնի ու նոր դռներ բացի՝ փառավորվելով այս ամենում:

ԱՍՄ